# Արձանագրություն N 2

( Նիստը կայացել է 2023թ. սեպտեմբերի 29-ին)

Նիստին մասնակցում են խորհրդի բոլոր անդամները և ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ռ. Մխոյանը:

**Օրակարգում՝**

1. *Մեթոդական միավորման նիստի օրակարգի հաստատում*

2. Նախորդ մեթոդմիավորման նիստի որոշումների կատարման մասին մեթոդմիավորման նախագահի զեկուցում:

3. Մեթոդական զեկույց/ձևավորվող գնահատում/

4. Փոխադարձ դասալսումների քննարկում

5. Որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին (դասվարներին) ատեստավորման նախապատրաստելու հարցը:

6. Դասավանդման նոր մեթոդների և հնարների կիրառման հարցը:

7. 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում առարկայական նոր չափորոշիչների և ծրագրերի ուսումնասիրում և քննարկում

8. Գործնական աշխատանքների, բաց դասերի, ըստ առարկաների արտադասարանական միջոցառումների , առարկայական շաբաթների, գիտագործնական համաժողովների, մեթոդական փառատոնների և այլ մեթոդական միջոցառումների հարցի քննարկում:

9. Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրով նախատեսված անգլերեն առարկայի հանրակրթական պետական, առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան ուսումնական ծրագրերի իրագործման մասին :

10. էլեկտրոնային մատյանների ստուգումների արդյունքների քննարկում

**Լսեցին՝**

*1.Մեթոդական միավորման նիստի օրակարգի հաստատման հարցը /զեկուցող՝ մ/մ նախագահ՝ Թամարա Զաքարյան/*

*Մեթոդական միավորման նախագահ Թ. Զաքարյանը ներկայացեց մ/մ նիստի օրակարգի հարցերը՝ բաղկացած 10 կետերից;*

*Հիմք ընդունելով մ/մ նախագահի կողմից ներկայացրած օրակարգը՝ մ/մ*

ՈՐՈՇՈՒՄ Է

*Հաստատել մեթոդական միավորման օրակարգը*

Լսեցին՝
2. Նախորդ մեթոդմիավորման նիստի որոշումների կատարման մասին մեթոդմիավորման նախագահի զեկուցում:

ՈՐՈՇՈՒՄ Է

Ի գիտություն ընդունել նախորդ մեթոդմիավորման նիստի որոշումների կատարման մասին մեթոդմիավորման նախագահի զեկուցումը:

Լսեցին՝
3. Մեթոդական զեկույց/ձևավորվող գնահատում//զեկուցող՝ մ/մ նախագահ/

Զեկուցով հանդես եկավ մ/մ նախագահ Թ. Զաքարյանը, ով ներկայացրեց, որ 2024-2025 ուսումնական տարվանից 2-րդ,5-րդ,7-րդ և 10-րդ դասարաններում կիրառվել է ձևավորող գնահատումը: Թ. Զաքարյանը ներկայացրեց, որ ձևավորող գնահատման նպատակը ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա Գործունեության շտկումը ենթադրում է ուսուցչի և սովորողների առջև դրված ուսումնական խնդիրների համատեղ լուծում՝ արդյունքները բարելավելու նպատակով: Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին: Նշանակում է՝ ուսուցիչը և սովորողները կարող են արդեն ամենավաղ փուլերից սկսած՝ ազդեցություն ունենալ ուսուցման և առհասարակ կրթության որակի բարելավման վրա Ձևավորող գնահատումը կիրառվում է թե՛ ուսուցչի, թե՛ սովորողի համար ընդունելի հնարներով:
Այնուհետև Զաքարյանը ներկայացրեց ձևավորող գնահատման 5 բաղադրիչները
1. Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:
2. Սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:
3 Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:
4. Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա
5. Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում:

Լսեցին՝
4. Փոխադարձ դասալսումների քննարկում//զեկուցող՝ մ/մ նախագահ/

Փոխադարձ դասալսումների մասին արտահայտվեց մ/մ նախագահ Թ. Զաքարյանը,ով ներկայացրեց,որ մ/մ անդամները կատարել են փոխադարձ դասալսումներ.դասալսումները քննարկվել են, վեր են հանվել թերությունները, կատարվել են խորհրդատվություններ:

Լսեցին՝ Ս. Ազարյանի,Հ. Մարգարյանի կարծիքները դասալսումների վերաբերյալ:
5. Որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին (դասվարներին) ատեստավորման նախապատրաստելու հարցը: //զեկուցող՝ մ/մ նախագա

**Ուսումնական հաստատության սկսնակ ուսուցիչների մասնագիտական կարողությունների և դասավանդման որակի բարձրացման վերաբերյալ առարկայական մեթոդական միավորումը**

ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Կազմակերպել սեմինար պարապմունքներ (կամ մանկավարժական ընթերցումներ)՝ սկսնակ ուսուցիչների մասնագիտական գիտելիքների և ունակությունների բարձրացման նպատակով:

2.Հաստատության հմուտ և փորձառու ուսուցիչների հետ համատեղ կազմակերպել փոխադարձ դասալսումներ, մանկավարժական ընթերցումներ, առաջավոր փորձի փոխանակումներ:

3.Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական մեթոդական խորհրդատվություններ սկսնակ ուսուցիչների համար՝ հմուտ ուսուցիչների առաջավոր փորձի հաղորդման նպատակով:

4.Որակավորման տարակարգ չունեցող ուսուցիչներ՝ Ա.Պարսամյանին,Ֆ Բաղոյանին ցուցաբերել անհրաժեշտ խորհրդատվություն և նրանց նախապատրաստել հերթական ատեստավորման:

5.Խնդրել տնօրենին գործող օրենսդրությանը համապատասխան՝ պայմաններ ստեղծել սկսնակ ուսուցիչների մասնագիտական ունակությունների , գիտելիքների և հմտությունների ձեռքբերման ու զարգացման համար, կազմակերպել վերապատրաստաման դասընթացներ:

**Լսեցին՝**

6. Դասավանդման նոր մեթոդների և հնարների կիրառման հարցը//զեկուցող՝ մ/մ նախագահ/

Մ/մ նախագահը ներկայացրեց,որ կատարված դասալսումների ընթացքում ուսումնասիրվել է ուսուցիչների կողմից կիրառվող դասավանդման նոր մեթոդների ու հնարների կիրառումը,ինչը բարձրացրել է դասի ժամանակ աշակերտների ակտիվությունը և ընդգրկվածության աստիճանը:

Մեթոդական միավորումը

ՈՐՈՇՈՒՄ Է.

Կիրառել դասավանդման նոր մեթոդներ և հնարներ աշակերտների ակտիվությունը և ընդգրկվածության աստիճանը դասի ժամանակ բարձրացնելու համար:

**Լսեցին՝**

7. 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում առարկայական նոր չափորոշիչների և ծրագրերի ուսումնասիրում և քննարկում /զեկուցող՝տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ/

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Ռ. Մխոյանը ներկայացրեց,որ 2024-2025 ուսումնական տարվանից 2-րդ, 5-րդ 7-րդ և 10-րդ դասարաններում ուսումնական պրոցեսը կազմակերպվելու է հանրակրթական պետական նոր չափորոշիչների, առարկայական նոր չափորոշիչների և ծրագրերի հիման վրա,ուստի անհրաժեշտ է,որ դասավանդող ուսուցիչները ծանոթանան վերոնշյալ դասարանների առարկայական չափորոշիչներին ու ծրագրերին՝ հետագա գործընթացը ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

Մեթոդական միավորումը

ՈՐՈՇՈՒՄ Է.

Մեթոդական միավորման յուրաքանչյուր նիստի ժամանակ ուսումնասիրել և քննարկել Առանձին դասարանների առարկաների չափորոշիչները և ծրագրերը

**Լսեցին՝**

8. Գործնական աշխատանքների, բաց դասերի, ըստ առարկաների արտադասարանական միջոցառումների , առարկայական շաբաթների, գիտագործնական համաժողովների, մեթոդական փառատոնների և այլ մեթոդական միջոցառումների հարցի քննարկում//զեկուցող՝ մ/մ նախագահ/

Մեթոդական միավորումը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Յուրաքանչյուր ամսվա ընթացքում, ուսուցչի ընտրությամբ, կազմակերպել բաց դասեր, դասարանական կամ արտադասարանական միջոցառումներ, առարկայական շաբաթներ:
2. Անցկացնել գիտագործնական համաժողովներ, մեթոդական փառատոնների և այլ մեթոդական միջոցառումներ:

**Լսեցին՝**

Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրով նախատեսված անգլերեն առարկայի հանրակրթական պետական, առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան ուսումնական ծրագրերի

իրագործման հարցը /զեկուցող՝տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Ռ. Մխոյան

**Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍՆ կողմից հաստատված առարկայական չափորոշիչների և ծրագրերի պահանջները ՝ մեթոդական միավորումը**

ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Ուսումնասիրել անգլերեն առարկայի դասավանդման մակարդակը միջին դպրոցի 5րդ և 7-րդ դասարաններում՝2023 -2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:
2.Տարրական դպրոցի 3 -րդ և4 -րդ դասարաններում առաջին կիսամյակի ընթացքում կազմակերպել գրավոր աշխատանքներ, ըստ համադպրոցական տարեկան ծրագրի (պլանի):

3.Հանձնարարել մեթոդական միավորման նախագահին՝ կատարած ուսումնասիրությունների և աշխատանքների մասին զեկուցումով (հաղորդումով) հանդես գալ առաջիկա մանկավարժական խորհրդի նիստում:

**Լսեցին՝**

10. էլեկտրոնային մատյանների ստուգումների արդյունքների հարցը /զեկուցող՝տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ/

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Ռ. Մխոյանը ներկայացրեց էլեկտրոնային մատյանների ստուգումների արդյունքները,ըստ որի մ/մ անդամների մոտ

1.Գրանցումները կատարվել են սահմանված Կարգին համապատասխան

2.Գնահատականների փոփոխություններ չկան

3.Եռօրյա ժամկետից դուրս գնահատումներ չկան

Նախագահ՝ / / Թ Զաքարյան